Հավելված N 6
ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի
2019թ. հուլիսի 4-ի N 145-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ բաժին) Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում տեսչական մարմնի ղեկավարը:

3. Բաժինը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1358-Ն որոշմամբ հաստատված «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության» կարգի, իրավական այլ ակտերի, տեսչական մարմնի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

4. Բաժնի անվանումն է՝

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժին:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի նպատակն է տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացման և գործունեության շարունակական կատարելագործման ապահովումը:

6. Բաժնի խնդիրն է աջակցել տեսչական մարմնին ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով հասնելու իր նպատակների իրագործմանը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինը՝

1) կազմում և տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հաստատմանն է ներկայացնում բաժնի գործունեության տարեկան ծրագիրը.

2) բացահայտում և պարբերաբար գնահատում է տեսչական մարմնի բոլոր ստորաբաժանումների յուրաքանչյուր գործառույթի և (կամ) ենթահամակարգի ռիսկերը, կառավարում բացահայտված ռիսկերը.

3) պարբերաբար խորհուրդ է ներկայացնում տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներառող հաշվետվություններ.

4) տեսչական մարմնում իրականացնում է ներքին հսկողություն՝ հետևյալ ուղղություններով՝

ա. կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն.

բ. բողոքների պատճառների ու արդյունքների վերլուծություն.

գ. տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում ու վերլուծություն.

5) կատարում է ուսումնասիրություններ տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում: Ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված տվյալների մասին կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն համապատասխան ստորաբաժանման գործունեության և բացահայտված ռիսկերի վերաբերյալ.

6) առնվազն յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում և ներկայացնում խորհուրդ.

7) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ բաժինը կարող է իրականացնել կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի աշխատանքների իրականացումը կառավարում է խորհուրդը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարը, համակարգում է տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակը:

9. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի պետը:

V. ԲԱԺՆԻ ՊԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

10. Բաժնի պաշտոնները քաղաքացիական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ են:

11. Բաժնի պետին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում, ինչպես նաև՝ նրա նկատմամբ խրախուսման և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

12. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

13. Բաժնի պետը՝

1) հաշվետու է և հաշվետվություններ է ներկայացնում խորհուրդ, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին և տեսչական մարմինների գրասենյակ.

2) իրականացնում է պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները.

3) կատարում է տեսչական մարմնի ղեկավարի՝ իր լիազորությունների սահմաններում տված հանձնարարականները.

4) կազմակերպում և ղեկավարում է բաժնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է բաժնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

5) քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերին համապատասխան սահմանում է բաժնի աշխատողների պարտականությունները.

6) տեսչական մարմնի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում բաժնի քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

7) տեսչական մարմնի ղեկավարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև՝ աշխատանքային խմբեր ձևավորելու վերաբերյալ.

8) ելնելով բաժնի գործառույթներից ու խնդիրներից՝ տեսչական մարմնի ղեկավարի համաձայնությամբ կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով այլ մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

9) իրականացնում է վերահսկողություն բաժնին հանձնված գույքի պահպանության նկատմամբ:

10) իրականացնում է իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

14. Բաժնի աշխատողներն իրականացնում են պաշտոնի անձնագրով իրենց վերապահված լիազորությունները:

15. Բաժնի աշխատողները տեսչական մարմնի ղեկավարի լիազորագրերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից:

16. Բաժնի աշխատողներն իրավունք ունեն՝

1) տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջելու սույն կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ.

2) իրենց անմիջական ղեկավարի միջոցով տեսչական մարմնի ղեկավարին զեկուցելու տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատողների կողմից իրենց գործառույթների իրականացումը խոչընդոտելու վերաբերյալ.

3) ներկայացնելու առաջարկություններ տեսչական մարմնի գործունեության կատարելագործման վերաբերյալ:

17. Բաժնի աշխատողները պարտավոր են՝

1) հետևել որակի ապահովման բաժնի գործունեության տարեկան ծրագրի իրականացմանը.

2) չհրապարակել ու չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

3) գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների.

4) իրենց գործառույթների իրականացման ընթացքում չխոչընդոտել բաժնի և տեսչական մարմնի այլ ստորաբաժանումների բնականոն գործունեությունը:

18. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների շրջանակի, գործունեության ազդեցության լիազորությունների շրջանակի, շփումների ու ներկայացուցչության շրջանակի, խնդիրների բարդության և դրանց լուծման շրջանակի, իրավունքների ու պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց զբաղեցրած քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1358-Ն որոշմամբ հաստատված «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության» կարգով: